ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Տ. Կ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Սաբաղական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Գերապատիւ Տ. Թեմակալի վեհակին Վրաստանի և Իմերէթի Ս. Գէորգ Արքեպիսկոպոսի, միաբանի Վանաց աւագ եկեղեցւոյ Տփխեաց Արժանապ. Գիւտ աւագ քահանայի, Գերազնիւ պարոնայց Գէորգայ Եանդուլեանց, Արզարու Յովհաննիսեանց և Ալէքսանդրի Երիցեանց և հարազատ որդւոց Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն Տիրաւանդ հանդերձ Հայրապետական օրհնութեամբ։

Յամին 1897 յ19 ամսեանն Յունիսի կոնդակաւ մերով թ. 609 թոյլատրեցար բարեգործ պ. Աւետիքայ Բ. Ղուկասեանց կառուցանել ի գաւթի Վանաց աւագ եկեղեցւոյ քաղաքիդ շինութիւն մի ընդ անուամբ «եկեղեցական պատմական թանգարան»։ Զարդիս, որպէս յայտնէ մեզ մեծապատիւ բարերարն, արդէն աւարտեալ է ամենեքիմբ զշինութիւնն և մնայ կարգադրութեան Մերոյ յաղագս բացման թանգարանին։ Եւ քանզի մեծածախս շինութիւն բարերարին ունի զիւրն նշանակութիւն և հարկ իսկ է զի ըստ կոչման անուանն ունիցի յատուկ վերահսկող մարմին մի յաղագս առայսային ի բարգաւաճումն և ի յարատեւութիւն այնորիկ։ Մեք հարկ համարիմք սովին Հայրապետական կոնդակաւ կարգել զԳերապատուութիւն Ձեր հանդերձ Տ. Գիւտ բահանայիւ ընդ գերազնիւ պարոնայցդ ցմահ մնայիւն Յանձնաժողով և վերահսկող եկեղեցական թանգարանի պ. Ղուկասեանի որ ի գաւթի

Առաջնորդանիստ եկեղեցւոյդ, իսկ որպէս կառավարիչ անմիջական ըստ յատուկ ցանկութեան բարերարին նշանակեմք զանդամն Ցանձնաժողովոյդ զՏ. Գիւտ աւագ քահանայն Աղանեանց։

Ցանձն առնելով զայս ազգապարծան գործ Ձեզ Ցանձնաժողովոյդ Թողումք ի կամս Ձեր առնել զպատշաճաւորն կարգադրութիւն յաղագս բացման նորին և մխիթարութիւն և քաջալերութիւն բարերար հիմնադրին, որոյ կտակաւ ունին յանձնիլ ի գործադրութիւն Ցանձնաժողովիդ քանի մի այլ բարենպատակ և կարևոր կարգադրութիւնք։

Օրհնելով զբարերարն, զպատճառն և զնորընտիր Ցանձնաժողովդ նորոգ Թանդարանի՝ մաղթեմք վասն ամենեցունցդ կալ մնալ յառողջ և յաջող ի կենցաղս ազգօգուտ գործովք առաքինական վաստակովք և քրիստոնէական բարեգործութեամբ, արժանացեալք գովութեան ազգիս և վարձուց երկնաւորին։ Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ Հօրէ և ի Մէնջ. Ամէն։

ՄԿՐՏԻՉ Կաթուղիկոս ամենայն Հայոց

Ի 15 Յունիսի 1900 ամի և ըստ տոմարիս ՌՑԽԹ
ի Հայրապետութեան մերումէ. ամի, յԱրարատեան Մայր
Աթոռ Ս. Էջմիածնի, Ի Վաղարշապատ։ Թ. 660.

---

† ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ

Հայ գրականութիւնն ընդհանրապէս և Ցանկահայ պարբերական մամուլը վասնաւորապէս՝ քսաներորդ դարու հէնց սկզբին մեծ կորուստ ունեցաւ յանձին Մ. Մամուրեանի։

Դեռ մի տարի առաջ Ցանկահայերը մեծ շքով տօնեցին այդ գրական բեղմնաւոր գործիչի յիսնամեայ յոբելեանը և ահա յունուարի 2 ին յանկարծ նրա մահուան բօթն են հաղորդում լրագիրները։

Մեր գրական գործիչներից շատ քչերին է վիճակուել յիսուն տարի շարունակ գրիչը ձեռքին և տոկուն